Հավելված N 1
ՀՀ կառավարության 2023 թվականի
օգոստոսի 3-ի N 1332 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՋՐՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Սույն կարգով կանոնակարգվում են ջրօգտագործման թույլտվության տրամադրման գործընթացը և այդ գործընթացի հետ կապված իրավահարաբերությունները:

2. Ջրօգտագործման թույլտվության տրամադրման գործընթացն իրականացվում է Հայաստանի Հանրապետության ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի (այսուհետ՝ լիազոր մարմին) կողմից՝ Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) և սույն կարգի պահանջների համաձայն:

3. Ջրօգտագործման թույլտվությունը տրամադրվում է հայտատուի կողմից լիազոր մարմին ներկայացրած ջրօգտագործման թույլտվության հայտի և հայտին կից՝ ջրօգտագործման թույլտվություն ստանալու համար պահանջվող փաստաթղթերի ցանկի (այսուհետ՝ ցանկ) հիման վրա: Ջրօգտագործման թույլտվության հայտին ներկայացվող պահանջները ներկայացված են Ձև N 1-ում:

4. Ջրօգտագործման թույլտվության հայտը (այսուհետ՝ հայտ) և ցանկով պահանջվող փաստաթղթերի ամբողջական փաթեթը լիազոր մարմնի քննարկմանն է ներկայացվում թղթային կամ էլեկտրոնային տարբերակով:

5. Հայտի գնահատման համար՝

1) ջրավազանային տարածքային կառավարման մարմինների կողմից իրականացվում է մոնիթորինգ, ինչի հիման վրա կազմվում է զեկուցագիր՝ համաձայն Ձև N 2-ի.

2) ջրային պետական կադաստրի տարածական բաղադրիչի միջոցով ճշգրտվում է ջրառի և ջրահեռացման աշխարհագրական տեղադիրքը:

6. Հայտում կամ կից փաստաթղթերում սխալների առկայության կամ փաստաթղթերը թերի լինելու դեպքում լիազոր մարմինը դրանք հայտնաբերելու օրվանից ոչ ուշ, քան 2 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ծանուցում է հայտատուին՝ մանրամասնելով բոլոր սխալների, թերի փաստաթղթերի վերաբերյալ, և առաջարկում 15 աշխատանքային օրվա ընթացքում վերացնել առկա թերությունները: Այդ ընթացքում հայտի քննարկման գործընթացի ժամկետը կասեցվում է, մինչև թերի փաստաթղթերի համալրման օրը:

7. Հայտում կամ փաստաթղթերում թերություններ չհայտնաբերելու կամ հայտնաբերված թերությունները սահմանված ժամկետում վերացնելուց հետո լիազոր մարմինը 3 աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է հասարակայնության ծանուցումը ջրօգտագործման թույլտվության հայտի վերաբերյալ:

8. Հասարակայնության ծանուցման հրապարակման օրվանից հետո լիազոր մարմինը գնահատում է հայտը՝ ելնելով օրենսգրքով սահմանված ջրօգտագործման թույլտվության ստացման հայտի գնահատման չափանիշներից:

9. Լիազոր մարմինը հայտի գնահատման ժամանակ պարզում է՝

1) հայտով պահանջվող ջրօգտագործման թույլտվության համապատասխանությունն օրենսգրքին, ջրի ազգային քաղաքականությանը, ջրի ազգային ծրագրին, ջրավազանային կառավարման պլաններին և դրանց առնչվող նորմատիվ իրավական այլ ակտերին.

2) նախատեսվող ջրօգտագործման ուղղակի և գումարային ազդեցություններն ազգային ջրային պաշարի և ջրային ռեսուրսների որակի և քանակի վրա.

3) ջրային պաշարների բավարար լինելը ջրօգտագործման թույլտվություն տալու համար կամ պահանջվող ջրօգտագործման թույլտվության համապատասխանությունը ջրի ազգային պաշարի պահպանման պահանջներին կամ ջրերի ստանդարտներին, այդ թվում՝ ջրի որակի նորմերին.

4) նախատեսվող ջրօգտագործման համապատասխանությունը ջրի բաշխման գերակայություններին և նշանակությանը.

5) հայցվող ջրօգտագործման թույլտվության հնարավոր ազդեցությունը գործող ջրօգտագործման թույլտվություն ունեցողների իրավունքների վրա.

6) սոցիալ-տնտեսական և շրջակա միջավայրի վրա ազդեցությունները.

7) հասարակայնության ծանուցման արդյունքում ստացված կարծիքները.

8) նախատեսվող ջրօգտագործման ազդեցությունը ջրային ռեսուրսների խոցելիության մեծացման վրա կլիմայի ներկա և կանխատեսվող փոփոխությունների հետևանքով:

10. Լիազոր մարմինը հայտը գնահատում է հիմք ընդունելով՝

1) օրենքների և նորմատիվ ակտերի իրավական կարգավորումները և հայցվող ջրօգտագործման համապատասխանությունը այդ կարգավորումներին.

2) ջրավազանային տարածքային կառավարման մարմինների կողմից ներկայացված տեղեկատվությունը.

3) ջրային պետական կադաստրում առկա տեղեկատվությունը.

4) «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված տեղեկատվությունը.

5) պետական կառավարման համակարգի և տեղական ինքնակառավարման մարմինների և պետական կազմակերպությունների կողմից իրենց իրավասությունների շրջանակում մշակված կամ ստացված տեղեկատվությունը:

11. Լիազոր մարմինը սահմանափակ ջրային ռեսուրսները մրցակցող շահագրգիռ կողմերի միջև բաշխում է համաձայն հետևյալ գերակայությունների՝

1) խմելու ջրամատակարարում և ջրահեռացում.

2) բնական ջրահոսքերի հուներից ջրառ չպահանջող ավանդական ջրօգտագործողներ.

3) հասարակական շահի համար առավելագույն օգուտներ ապահովող ջրօգտագործման թույլտվության հայտեր.

4) ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման խրախուսմանն ու որակի բարելավմանն ուղղված որոշակի միջոցառումներ պարունակող հայտեր:

12. Լիազոր մարմինը հայտի գնահատման ժամանակ հիմք է ընդունում ջրային ռեսուրսների պահանջարկի գնահատման բաղադրիչներն ըստ ջրօգտագործման նպատակների առաջնային կարևորության՝

1) խմելու-կենցաղային,

2) գյուղատնտեսական,

3) էներգետիկ,

4) արդյունաբերական,

5) ձկնաբուծական,

6) այլ:

13. Հայտը դրական գնահատելուց հետո լիազոր մարմինն այդ մասին պատշաճ ծանուցում է ջրօգտագործողին՝ ծանուցումը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում պետական տուրքը սահմանված կարգով ու չափով վճարելու համար:

14. Լիազոր մարմինը գանձապետական առցանց կառավարման համակարգի կամ պետական վճարումների էլեկտրոնային համակարգի միջոցով հավաստիանում է պետական տուրքի՝ սահմանված ժամկետում վճարված լինելու մասին և վավերացնում ջրօգտագործման թույլտվությունը:

15. Ջրօգտագործման թույլտվությունը վավերացնելուց հետո լիազոր մարմինը այդ մասին պատշաճ ծանուցում է ջրօգտագործողին և հրավիրում իր կողմից վավերացնելու և ստանալու ջրօգտագործման թույլտվությունը:

16. Լիազոր մարմինը հայտը մերժում է, եթե այն չի բավարարում գնահատման չափորոշիչներից որևէ մեկին:

17. Լսված լինելու իրավունքն իրացնելու նպատակով լիազոր մարմինը գրավոր հրավիրում է հայտատուին՝ մերժման հիմքերը ներկայացնելու համար: Հայտատուի լսված լինելու իրավունքի իրացումն արձանագրվում է:

18. Հայտը մերժվում է լիազոր մարմնի ղեկավարի հրամանի հիման վրա, ինչի մեջ հստակ նշվում է մերժման պատճառներն ու իրավական հիմքերը: Ջրօգտագործման թույլտվության հայտի մերժման մասին լիազոր մարմինը պատշաճ ծանուցում է հայտատուին մերժման մասին հրամանն ընդունելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

19. Ջրօգտագործման թույլտվության գործողության ժամկետը սահմանվում է Հայաստանի Հանրապետության ջրային օրենսդրության պահանջների համաձայն:

20. Էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ստանալու նպատակով ջրօգտագործման թույլտվության համար դիմած անձին (անկախ տվյալ տարածքում ջրավազանային կառավարման պլանի առկայության հանգամանքից) ջրօգտագործման

թույլտվությունը տրվում է մեկ տարի ժամկետով՝ էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ստանալու համար: Էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ստանալուց հետո հայտատուն 15 աշխատանքային օրվա ընթացքում դիմում է լիազոր մարմին ջրօգտագործման թույլտվության ժամկետը էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայի ժամկետին համապատասխանեցնու համար:

21. Հորատանցքի հորատման նպատակով ջրօգտագործման թույլտվությունը տրամադրվում է 1 տարի ժամկետով, ինչից հետո ջրօգտագործողը դիմում է լիազոր մարմին գործող հորատանցքից ջրօգտագործման թույլտվություն ստանալու համար:

22. Ջրօգտագործման թույլտվությանը կցվում են ջրօգտագործման թույլտվության անբաժանելի մաս համարվող օրենսգրքին չհակասող պայմաններ, որոնք համարվում են ջրօգտագործման թույլտվության անբաժանելի մաս:

23. Ջրօգտագործման թույլտվությունը կազմվում է 2 օրինակից, որից 1 օրինակը տրվում է ջրօգտագործողին, իսկ մյուս օրինակը պահվում է լիազոր մարմնում:

24. Ջրօգտագործման թույլտվությունն ունենում է ծածկագիր, որտեղ նշվում է ջրավազանային կառավարման տարածքը, գետավազանը/գետը, ջրառը, ջրահեռացումը, ջրային ռեսուրսը և տրվող ջրօգտագործման թույլտվության կարգավիճակը՝ համաձայն Ձև N 3-ի:

25. Ջրօգտագործման թույլտվության տրամադրումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության ջրային օրենսդրությամբ սահմանված կարգով լիազոր մարմինը ջրօգտագործման թույլտվությունը և դրան կից պայմանները գրանցում է պետական ջրային կադաստրում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

04.08.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ